

Կապիթալիզմի Գ. Գ. Վեյսբերգի

A 3935
ԳԱՐՆԱՆԱՑԱՆ
= ՑՈՐԵՆԻ =
ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

XXXXXXXXXX

in

Doc 300

633.11:631.531.1


Ն

A 3935

ԳԱՐՆԱՆԱՑԱՆ
= ՑՈՐԵՆԻ =
ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կազմեց գյուղացիներ

Կ. Կ. ՄԵԼԻՔ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆՑ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՕԵՐԵՎԱՆ-1930

Հրատ. № 1184

ՊԵՏՅՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ԵՆԵՎԱՆՈՒՄ

Գրառ. № 3029(բ) Տիրաժ 5000 Պատվ. 171

ԳԱՐՆԱՆԱՅԱՆ ՑՈՐԵՆԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեղանում դարնանացանի վրա շատ քիչ են ուշադրութիւն դարձնում, հերկը կատարում են շատ տեղ դարնանը և այն վոչ թե արմատապըտուղներէց և խոտաբույսերէց հետո կամ հանգիստ թողած հողում, այլև հացաբույսերէց հետո:

Փորձը ցույց ե տվել, վոր մի տարեկան առվույտից հետո ցանած ցորենը տվել ե մի հեկտարից 135 փութ, կարտոֆիլից հետո՝ 121 փութ, վարսակից կամ գարուց հետո՝ 109 փ.:

ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՎ ՀԵՐԿԸ

Հողի հերկը չպետք ե թողնել գարնանը, այլ պետք ե աշնանը կատարել, աչքի առաջ ունենալով, վոր աշնանը վորքան շուտ հողը հերկվի գարնանացանի համար և այն ել դեմի շրջաններում, աչքան նա լավ պատրաստված կըլինի և ապահովված թե անդառության, թե ոգի և խոնավության կողմից: Բացի այդ, աշնան հերկից վոչնչանում են և մոլախոտերը: Աշնանը հերկելուց արտատեղում բուսած խոտերը հողի

մեջ մտնելով փտոււմ են և հողը պարարտաց-
նոււմ, սննդարար նյութերով հարստացնում: Հո-
ղը ձմեռվա ընթացքում փխրանում է, և ցրտե-
րի պատճառով շատ մնաստատուններ են փչանում:

Նախալեռնալին շրջաններում աշնանավարի
համար անհրաժեշտ է, վոր աշնան վերջերին
հողը վորչափ կարելի յէ կանուխ հերկվի, և ձը-
մեռվա ընթացքում լեկած ձյունը հողի մեջ մըտ-
նելով՝ նպաստի սերմի շուտ ծլելուն, աճելուն և
շատ բերք ստանալուն:

Փորձը ցույց է տվել, վոր լեթեհողը հերկ-
ված է վաղ աշնանը (սեպտեմբերին), մի հեկ-
տար տեղից ստացվել է 80 փ., հոկտեմբերի
կեսին հերկվածը՝ 77 փ., նոյեմբերին՝ 75 փ.,
վաղ գարնանը՝ 66 փ.: Ասել է՝ աշնան վաղ հեր-
կից 14 փութ ցորեն ավել է ստացվել, քան
գարնան հերկից:

Բացի այն, վոր աշնան հերկը բերքատու-
թյան վրա լավ է ազդում, այլև նա ազդում է
մուլախոտերի վոչնչանալուն. վորքան շուտ և
խորը հերկվի աշնանը, այնքան մուլախոտերը
շատ կփչանան, և արտն ազատ կլինի դրանցից:
Փորձը ցույց է տվել, վոր աշնանացանի հըն-
ձից հետո, յեթէ արտատեղը լերեսանց ($1\frac{1}{2}$ վեր-
շուկ) հերկվի, ապա անջրդի տեղերում հողի մեջ
լեղած խոնավությունը կմնա, կպահվի: Թեև մո-

լախոտերի սերմերը հողի մեջ ընկնելով ծիլ են առաւելաւ, բայց խորը հերկելու ժամանակ նրանք փչանում են և հողը պարարտացում: Հնձից հետո յերեսանց հերկի ժամանակ շատ փաստա-տու վորդեր հողի յերեսն ընկնելով՝ թռչուններին կերակուր են դառնում և քամուց ու արե-վից փչանում, իսկ հողի մեջ ավելի խորը մտած վորդերն աշնան խոր հերկի ժամանակն են հողի յերեսն ընկնում և ձմեռվա ցրտերից փչանում:

Գարնանացան ցորենի համար արտատեղի հերկը $3\frac{1}{2}$ —4 վերջով խորությամբ բավարար ե: Աշնանը հերկած հողը թողնում են մինչև գա-րուն, իսկ գարնանը փոցխում են, հավասարեց-նում և հետո սերմը գցում: Յեթե ձմեռվա ըն-թացքում աշնանը հերկած հողը պնդացել ե, և կոշտերը չեն փխրացել, սերմը գցելուց առաջ չորս խոփանի գութան են գցում և փոցխում:

ՍԵՐՄԱՅՈՒ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Սերմացուն պետք ե մեջը վոչ մի խառ-նուրդ, մալախոտերի սերմ չունենա, ջարդված չլինի: Առողջ, խոշոր և ծանր սերմերից կարե-լի յե շատ բերք ստանալ. մանր սերմերը հողի մեջ մեծ մասամբ փչանում են, լավ ծիլ ու ար-մատներ չեն գցում, չեն կարողանում ողից և հողից անունդ ստանալ, կերակրվում են միայն

իրեն՝ սերմի մեջ լեղած սննդի պաշարով, ահն-
ինչ ծանր ու խոշոր սերմերի մեջ սննդի պա-
շարը շատ լինելով, թե խորը և լավ արմատներ
են գցում, թե լավ ծիլ տալիս և թե հավասար
կերպով աճելուց մոլախոտերից չեն մնասվում,
այլ խեղդում են նրանց. մանր ու լավ չգտած
սերմը ցանելուց ընդհանառակն ե լինում՝ մոլա-
խոտերն են ցորենի ցանքսը խեղդում:

Փորձը ցույց ե տվել, վոր խոշոր ու ծանր
վարսակի սերմ ցանելուց ստացվել ե մի հեկ-
տարից 80 փուլթ, իսկ թեթև ու մանր սերմ ցա-
նելուց՝ 35 փուլթ: Ահա թե ինչքան ձեռնաու յե
առողջ սերմացուն:

Սերմացուն մաքրում են սերմագտիչ մեքե-
նայով քամելուց հետո, յերբ հատիկները բա-
ժանվում են ծղոտից, հողից, ջարդված սերմե-
րից և մոլախոտերի սերմերից: Սերմագտիչը բա-
ժանում ե հատիկները խոշոր ու մանր տեսակ-
ների. յեթե այդ խոշոր հատիկների մեջ նկատ-
վում ե գլուխու և իրենց ձևով թե մեծությու-
նով տարբերվում են մեկ մեկից, անց են կաց-
նում նաև գլուխու հանող Մայերի մեքենայով,
վորի № 1-ը մի ժամում 10 փուլթ հատիկ ե
մաքրում և տեսակների բաժանում, № 2-ը մեկ
ժամում 20 փուլթ, № 3-ը՝ 30 փուլթ:

ՍԵՐՄՆ ԱԽՏԱՀԱՆԵԼԸ

Յեթե սերմացուն մրիկով վարակված ե, սերմը դցելուց առաջ պետք ե ախտահանել: Սերմն ախտահանում են այնպիսի ճարով, վոր նա փշացնի մրիկի սաղմերն, առանց սերմացուին վնաս տալու: Ամենագործածական և մատչելի միջոց համարվում են ֆորմալինը և պղնձարջասպը:

Ֆորմալինը պատրաստում են այսպես. վերցնում են մի մաս ֆորմալին և խառնում 300 մաս ջրի հետ, մի շշին 300 շիշ ջուր (10 վեդրո ջրին 1 ֆ. ֆորմալին), կիսատակառի մեջ ամում և բրեզենտի վրա սերմացու ցորենը փռելով՝ նրա վրա ֆորմալինի հեղուկը սրսկում թխակով կամ ձեռով, այնքան խառնում, վոր բոլոր սերմը լավ թրջվում ե: Թրջելուց հետո հավաքում, կուտակում են և ծածկում ֆորմալինով թրջված բրեզենտով կամ քսակներով և 2 ժամ թողնում, վոչ ավելի և վոչ պակաս: Յերկու ժամից առաջ բաց արած հատիկների բոլոր սպորները չեն փշանում, իսկ յերկու ժամից ավել թողնելուց նրանք թունավորվում և կորցնում են ծլելու ընդունակութունը: Յերկու ժամը լրանալուց բացում են ծածկոցը, հատիկները բարակ շերտով փռում, չորացնում:

Մի ֆունտ ֆորմալինը բավական է 50 փ. հատիկներ ախտահանելու համար:

Պղնձարջասպով ալսպես են ախտահանում. վերցնում են $3\frac{1}{2}$ վեդրո ջրին 1 ֆունտ պղնձարջասպ (կապույտ քար): Պղնձարջասպը ջարդում, մանրում են, քիչ ջրի մեջ հալեցնում, կիսատակառի մեջ ածում խառնում և այդ լուծվածքի մեջ հատիկները քսակի մեջ լցրած կամ խախալի վրա ածած՝ կախում են և 5 րոպե պահում և հանելով փռում, չորացնում: 10—15 փ. հատիկների համար բավական է 1 ֆունտ պղնձարջասպ:

Հատիկներն ախտահանելիս անհրաժեշտ է և այն քսակներն ախտահանել, վորոնց մեջ ախտահանված հատիկները պետք է պահվեն: Ախտահանած սերմը շարքացան մեքենայի մեջ ածելուց առաջ մեքենայի արկղն էլ պետք է պղնձարջասպի լուծվածքով լվանալ:

ՍԵՐՄԸ ՑԱՆԵԼԸ

Դարնանացան ցորենից շատ բերք ստանալու համար բավական չէ հողի հերկը: Վորջան էլ հողը լավ պատրաստած լինի, յեթե իր ժամանակին չի սերմը գցվում, սերմը վատ է, հողի մեջ լավ չի ընկել, լավ բերք չի կարելի սպասել: Կարևոր է իմանալ սերմ դրելու ժամանա-

կը, ցանելու լեղանակը, բուլսի տեսակը և այլն:

1. Ցանելու ժամանակը

Փորձը ցույց է տվել, վոր կուբանում մարտի 10-ին ցանած սերմը մի հեկտարից տվել է 115 փ., մարտի 20-ին՝ 110 փ., ապրիլի 1-ին՝ 96 փ., ապրիլի 10-ին 80 փ.:

Բայի այն, վոր ուշ սերմը գցելուց քիչ բերք է ստացվում (մի ամիս ուշ ցանելուց 35 փութ պակաս), այլև ուշ ցանելուց թե լավ վորակով ցորեն չի ստացվում, և թե շատ մոլախոտեր են աճում, վորոնք խլում են ցորենից հողի սննդաբար նյութերը:

Վերև բերած ամսաթվերը պարտադիր չեն Հայաստանի համար: Ջանազան շրջաններում դարձան ցորենը պահանջում է տարբեր լեղանակ: Հայտնի չե, վոր վոչ միայն մարտի քսանին, այլ նույնիսկ ապրիլի սկզբին մեր լեռնային շրջաններում ձյունը դեռ նստած է լինում: Այս թվերը ցույց են տալիս, վոր ինչքան գարնան ցորենը ոգտվի հողի խոնավությունից, այնքան ավելի լավ կաճի, մանավանդ դեմի շրջաններում:

2. Ճանփի խտութունը

Խիտ ցանելը կախված է՝ 1. ցանքի ժամանակից. վորքան շուտ սերմը գցվի, այնքան քիչ սերմ կպահանջվի. ուշ գցելիս, ընդհակառակը, խիտ պետք է ցանել:

2. Հողի պատրաստությունից. յեթե արտատեղն աշնանն է հերկվել և այն՝ հարկավոր խտությամբ, սերմ քիչ է պահանջվում: Յեթե վատ պայմաններում է հերկված, ավելի սերմ է պահանջվում:

3. Սերմացուի հատկությունից. յեթե սերմը մաքուր է, ջարդված չէ, լիքն է (տուղ), լավ ծիլ կտա, և քիչ սերմ կգնա. ընդհակառակը, շատ սերմ կգնա, յեթե սերմը միանման հատկությունն չունի, խառն է:

4. Սերմը գցելու յեղանակից. ձեռով շաղ տալուց շատ սերմ կգնա, այնինչ շարքացանով՝ քիչ:

5. Արտատեղի մաքրությունից. յեթե արտատեղը մոլախոտերից ազատ է, սերմը քիչ է ցանվում, և ընդհակառակը շատ, յերբ մոլախոտերով ծածկված է:

6. Ցորենի տեսակից՝ յեթե սերմը խոշոր է, պետք է ավելի ցանել. մանր լինելուց քիչ սերմ է գնում: Ձեռով ցանելիս մի դեսիատին

տեղի վրա գնում ե 10—12 փուլի և ավելի, այն-
ինչ շաբաթացան մեքենայով՝ 7—8 փուլի՝ Ուշ ցա-
նելու ժամանակ սերմի քանակը սովորականից
ավել պետք ե վերցնել:

3. Ի՞նչ խորությամբ եմ սերմը գցում

Սերմը թե ինչ խորությամբ ե հողի մեջ
ընկնում, այդ ևս աղդեցություն ունի գարնա-
նացան ցորենի բերքի վրա:

Սերմն ընդունված ե հողի մեջ գցել $1\frac{1}{2}$ — $3\frac{1}{4}$
վերշուկ խորության մեջ. թե շատ լերես և թե
շատ խոր ընկնելն ունի իր պակասություն-
ները:

Շատ լերես ցանելիս, բոլոր սերմերը չեն
ծլում՝ շնորհիվ հողի վերին շերտի չորության.
ծիլ տվածներն ել թույլ են արմատներ
դրում:

Խոր ընկնելուց սերմը հողի լերես չի դուրս
դալիս, նա զրկված ե լինում իր աճելության հա-
մար ոգի ազատ մուտքից:

Կուրբանի գյուղատնտեսական փորձնական
կայանում կատարած փորձերը ցույց են տվել,
վոր կես վերշուկ խոր ընկած սերմը տվել ե մի
հեկտարին 85 փուլ, 1 վերշուկ խոր ընկած սեր-
մը՝ 79 փ., 2 վերշուկ խոր ընկած սերմը՝ 70

փութ, 2 ու կես վերջոյ խոր ընկած սերմը՝
60 փութ:

4. Ցանելու յեղանակը

Ձեռքով շաղ տալուց սերմը մի տեղ շատ
ե ընկնում, մյուս տեղում՝ քիչ և դեռ շատ տեղ
դատարկ մնում: Դրանից ել մի տեղ խիտ ե գը-
ցած սերմն աճում, մի ուրիշ տեղ՝ նոսր և փոց-
խը գցելուց կամ տափանելուց շատերը մնում
են հողի լերեսին կամ շատ խորն ընկնում:


Սերմն անհավասար խորության մեջ ընկնե-
լով՝ միաժամանակ չի ծլում և միաժամանակ
հասկեր բռնում: Պետք ե թողնել այն վատ սո-
վորությունը, վոր արորով կամ գութանով հողը
հերկելուց հետո, առանց փոցխելու, հողը հավա-
սարեցնելու և կոշտերը մաքրելու, սերմը գցում
են և հետո ծածկում հասարակ փայտի փոցխով.
այդպես ցանած սերմի մեծ մասը փչանում ե,
ծիլ չի տալիս, և շատ սերմ ե գնում:


Շարքացան մեքենայով ցանելուց առաջ
ցանքատեղի հողը փոցխելով ու տափանելով հա-
վասարեցնում են: Շարքացանով ցանելիս ու-
րիշ աշխատանք չի պահանջվում. նա համաչափ
խորության մեջ ե սերմը գցում և այն շարքը
շարքից հավասար հեռավորության վրա. դը-
րանից սերմը թե միաժամանակ ե ծլում և թե
միաժամանակ ել հասնում, հնձելը հեշտացնում:


Շաբաթացանի մի ուրիշ առավելութունն ել
այն է, վոր հեշտ է շաբթերի մեջ լեղած մոլա-
խոտերը փչացնելը, սերմն ել 20—30 տոկոսով
քիչ է դործադրվում:

Գարնանացան ցորենը լավ աճում է բերք
է ապիտ, լերը ցանում են հանդիստ թողած հո-
դում, կարտոֆիլից, առվույտից և բանջարանոցա-
յին բույսերից հետո և պահպանվում են վերև
հիշված բոլոր պայմանները: Իսկ այդ պայման-
ները միայն և միմիայն լրիվ չափով կարող են
ունենալ կոլլեկտիվները, վորոնք իրենց հողերի
համար մտցնում են ցանքաշրջանառութուն և,
բացի այդ, մեքենաների շնորհիվ իրենց ցանքը և
վարը կատարում են մեքենաներով:

Ամենից առաջ կոլլեկտիվները պիտի սովո-
րեն գարնանացան ցորենից բարձր լեկամուտ
ստանալ:









ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038861

[034]

A $\frac{1}{3935}$

ԳԻՆԸ 3 ԿՈՊ. ՄԱՍ. ($\frac{1}{2}$ մամուլ)



Կ. Կ. Մ. Մախնազարյան

Կուլտուրա յարօյ պշենիցյ

Գօսիզդատ ՄՍՐ Արմենի
Էրիվան—1930